



Ս. Մեսրոպը

(Նկատողութիւն)

Ս. Մեսրոպի վերաբերմամբ կայ մի ուշագրաւ պարագայ, որ ցարգ ոչ մի ուսումնասիրող դիտած չէ. փաստը հետեւեալն է.

Ս. Մեսրոպը համարեա եզակի Հայ նշանաւոր, հասարակական գործիչն է, որ իւր ազգակիցներէ կողմից հալածանքի չի ենթարկուել, այլ իւր ամբողջ հանրաձայնութեամբ ասպարէզուած վայելել է ջերմ աջակցութիւն և օժանդակութիւն, խանդավառ սէր և յարգանք: Նա ի Տէր ննջելով, հայերը մրցում էին նրա սրբանեալ մարմինը իրենց միջավայրում ամփոփելու: Նրա ննջմանից զինի ժամանակակից սերունդը կանգնեցրեց նրա շիրմի վրայ մատուռ—յուշարձան, որ անօրինակ բացառութեամբ շէն մնաց երկար ու ձիգ դարերով, զերծ բարբարոսների աւերչութիւնից և մեր դարում վայելուչ վերաշինեց: Ս. Մեսրոպը արժանացաւ համազգային, յոբելեանական փառաբանութեան և ամբողջ Հայ ազգը իւր ներկայացուցիչներով եկաւ Օշական նրա սուրբ շիրմին ուխտի, երկրպա-

գութեան: Գեռ շատ վաղ եկեղեցին դասեց նրան սրբոց կարգը: Նրա պատկերը օծուած, դրուած է տաճարում: Նրա անունով հիմնուած են եկեղեցիներ, դպրոցներ. Բերլին գերմաներէն մի հանդէս է լոյս տեսնում «Մեսրոպը» անունով: Ազգային հանգանակութեամբ նրա գերեզմանի մօտ կառուցուած է փառաւոր դպրոցական շէնք, առաջարկ է եղած ս. Էջմիածին կանգնեցնել նրա արձանը: Յիւրաւի, վերոգրեալները ս. Մեսրոպի վերաբերմամբ՝ զարմանալի եզակի և բացառիկ հանգամանք է, երբ աչքի առաջ ունենանք Խորենացու, Փարբեցու և այլ անթիւ հայ գործիչների կրած հալածանքը, անարգանքը իրենց հայրենակիցներից մինչև ցայսօր:

Նախախնամութեան մի առանձին շնորհն է և ողորմածութիւնը առ Հայ ազգը, որ սրա ընդհանրական կեանքում գոնէ մի այդպիսի լուսաւոր, ոգևորիչ և յուսատու կէտ կայ յանձին Ս. Մեսրոպի:

Ն. Վ. Տ.-Ա.